

## ՅԱՑՐԵՆԻ ՅՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ

ՈՒՈՒԲԵՆ ՍՍՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

### ՀԱՅԻ ՓՄԻՄԵՒ ՏԱՅԱՐՔ

«...Ե նոյն ճիրոյ շինեցաւ կարուղիկէ եկեղեցի,  
Թարձրացեալ փառօք ի պարծան խաչին»:

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՅԻՓՄԻՄԵԱՆՑ

Չխարհում կան գեղեցկություններ, արվեստի, ճարտարապետության հրաշալիքներ, որոնք երբեք իրենց կատարելությունը չեն կորցնում, ժամանակի անխնան հարվածները չեն կարողանում եղել ու նսեմացնել նրանց վեհությունն ու հոյակապությունը. նրանք դարերին են պատկանում:

Այդպիսիներից է Հոփիսիմյանց տաճարը: 1.300 տարուց ավելի է, ինչ կանգուն է Հայ ժողովրդի ճարտարապետական հմտությունը այս սքանչելի կոթողը: Ժողովուրդը, շինարար ու ստեղծագործ հայ ժողովուրդը, խտացրել ու ներզրել է այդ կոթողի մեջ այն ամեն լավին ու գեղեցիկը, որ իր հոգուց է բնում, իր հոգին է դրել նրա մեջ, հայի տքնածան ու ազնիվ, լավատես հոգին՝ հավերժորեն դարերին ի տես:

Հոփիսիմյանց տաճարի ճարտարապետական ոճը պարզ է, հղիված ու հստակ, կարծես բյուրեղ լինի. ավելորդ զարդեր ու սեթեթանքներ չունի: Եվ այդ հստակությունն ու պարզությունն է, որ նրան տալիս է մոնումենտալություն, և այցելուն նորից ու նորից է նայում ու չի կշտանում:

Ո՞վ չի հիացել Հոփիսիմեի տաճարով, որ զեթ մեկ անգամ բախս է ունեցել տեսնելու մարդկային ձեռքի այդ հրաշալիքը: Հայ պատմիչները մեծ հիացմունքով են խոսում նրա մասին, դեռևս շատ հին ժամանակներից:

Ավանդաբար, ինչպիս և վկայում է Ազաթանգեղոսը, Յ-րդ դարի վերջերին Հայատանում, Վաղարշապատի հնձաններում, հահատակում են Հոռմից փախած կույսերը: Դեռևս հեթանոս Տրդատ թագավորը պատճառ է հանդիսանում քրիստոնյա ու հայածական կույսերի ճարտարիստագրություն: Նրանց մեջ նշանավոր էին Գայանեն, Հոփիսիմեն և Մարիանեն: Եատ շանցած, նորտպարձ հարոց արքան, ժողովուրդի հետ միասին, բաղմաշարար Լուսավորչի անմիջական զեկավարությամբ, կանգնեցնում է վկայարաններ՝ նահատակված կույսերի նշխարժների վրա: Այսպիսով, Հոփիսիմե կույսի և նրա 33 ընկերութիների նահատակման սրբագործված վայրում, ներկա Հոփիսիմեի տաճարի անմիջական տեղում կառուցվում է մի նախնական վկայարան, որ և ամփոփվում են Հոփիսիմեի և մյուս կույսերի նշխարժները.

«Եւ կանգնեալ երիս վկայարանս, մի ի հիախուոյ յարեւելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանականն Հոփիսիմէ երեսուն և երեք ընկերօֆ»<sup>1</sup>, — գրում է Ագաթանցեղոսը:

Խակ սրբերի ոսկորները՝

«... Ցիլաքանչիւր արկեղ դնէր՝ իւրանշիւր հանդերձով կազմութեամբ պնդէր և կնքէր քրիստոսանշան կնքովն»<sup>2</sup>:

Հետագյում, պարսից արշավանքների ավերածության շրջանում (367—369 թ. թ.), երբ զավաճան Մերուժան Արծրունու գործակցությամբ ավերվում է Վաղարշապատը, ավերվում է նաև այս մատուռը, որը ավելի ուշ միայն վերաշինվում է Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի կողմից, որը նույնական իր հերթին կնքում է Հոփիսիմե կուսի տապանը և ամփոփում մատուռի բեմի տակ, ստորերկըրյա հանգստարանում:

«Զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի հայոց կաթողիկոսի, որդույ սրբոյն ներսիսի», — գրում է Սեբեոսը Ս. Սահակի շինած մատուռի մասին<sup>3</sup>:

«Խորին և փոքրատեսակ իմն էր շինեալ, գրում է մի ուրիշ պատմիչ՝ Հովհաննես Դրասիանակերտցին նույն մատուռի մասին»<sup>4</sup>:

Այնուհետև երկար ժամանակ որոշակի տեղեկություն չկա մատուռի վիճակի մասին:

Այս շրջանում Հոփիսիմեի և մյուս կուսերի վկայարանները վանքերի են վերածվել և 6-րդ դարի վերցերին և 7-րդ դարի սկզբներին հրշկում է ռամուսէ վանաց երէց» (իմա՝ երեք վկայարանների) <sup>5</sup>, իսկ Մովսես Եղիշվարդեցի կաթողիկոսի օրով Ս. Հոփիսիմեի փակակալ է նշանակվում Կոմիտասը: Կաթողիկոսական գահ բարձրանալով, Կոմիտասը (615—628 թ. թ.) եղավ մեր այն երանաշնորհ հայրապետներից մեկը, որոնք փայլում են իրենց շինարարական գործունեությամբ:

Հոփիսիմեի տաճարի շինարարությունից դեռ առաջ նա ձեռնարկել էր մի շարք այլ եկեղեցիների շինարարությանը, որոնցից կարելի է հիշել, օրինակ, Դմինի Ս. Գրիգոր եկեղեցու շինությունը<sup>6</sup>: Կոմիտաս

1. Ագաթանցեղոս, պատմութիւն, Թիֆլիս, 1882 թ., էջ 441:

2. Նույնը, էջ 442:

3. Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Սրբան, 1939 թ., էջ 89:

4. Հովհաննու կաթողիկոսի գրասիանակերտցու պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 74:

5. Ղ. Արիշան—Այրարատ, Վենետիկ, 1890 թ., էջ 237:

6. Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Սրբան, 1939 թ., էջ 79:

կաթողիկոսն էլ էջմիածնի փայտածածկ, պատերազմական արհավիրքներից վնասված կիսաքանդ կաթողիկեն նորից շինուածն է գովազգայարմար և ըբնաղատես կոփածոյ քարամբքոց<sup>7</sup>:

Բայց մեծ կաթողիկոսի շինարարական գործունեության լրումն ու գլուխ գործոցը եղավ Հոփիսիմեի շինությունը: Հոփիսիմեի տաճարի շինությունը նրա սրտին շատ մոտ է եղել, նրա բաղձանքն է եղել իր օրով տես. նել կուսերի նահատակման վայրում մի հրաշակերտ տաճար, չէ՞ որ ինքը մի ժամանակ նրա փակակալն էր եղել և սրտանվեր կապված էր նրա հետ: Եվ ահա եռանդուն ու շինարար կաթողիկոսը ձեռնարկում է իրականացնել իր վաղմի երազանքը:

Նա բոլորովին քանդրում է Սահակաշեն ոմթինն ու «փոքրատեսակ» մատուռը և սկըսում է կառուցել իր ծրագրած հոյակապ կոփողը, պարսից Ապովել թագավորի (590—628 թ. թ.) 28-րդ տարում, ինչպես վկայում է Սեբեոսը<sup>8</sup>, որը համապատասխանում է Քրիստոսի 618 թվականին:

Տաճարի շինարարության ժամանակ այս անգամ ևս գտնվում են Հոփիսիմեի նշխարբները.

Ալրդ՝ մինչդեռ քակէին գորմն մատրանն՝ երկեցաւ յանկարծակի լուսաւոր և ըբնաղագիւտ արքունական մարգարիտն, այսինքն կուսական մարմին սրբոյ տիկնոցն Հոփիսիմեի: Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա, յաւշեալ ի միմեանց. և երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով և մատանեաւ երանելույն Սահակայ Հայոց կաթողիկոսի, զոր նա ու համարձակեցաւ բանալի եւ կնքեալ իւրով ևս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայնապիսի մարգարիտ երից հաւատարձաց երրորդ մատանեալոց<sup>9</sup>, եկեղեցու շինությունը շատ նշանավոր է եղել:

«Եւ դրդեալ ամենայն կողմն հիւմիսոյ գայր յերկրպագութիւնն, — գրում է պատմիլը<sup>10</sup>:

Կումբքը վեհորեն դեմ տված քաղաքական փոթորկալից անցքերին ու աղետներին, մինչև այսօր էլ կանգնած է հայ ճարուարապետության հնագույն հոյակապ այս հուշարձանը: Նրա վրա փորագրված են տաճարի հիմնադրի՝ Կոմիտաս կաթողիկոսի երկու արձանագրությունները, մեծ՝ տաճարի տ-

7. Հովհաննու կաթողիկոսի գրասիանակերտցու պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 75:

8. Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Սրբան, 1939 թ., էջ 89:

9. Նույն տեղամ:

10. Նույն տեղում:

րեմտյան պատի ճակատին դրսից, իսկ փոքրը՝ խորանի պատի վրա ներսից:

«Ես Կոմիտաս եկեղեցապան սրբոյն Հռիփսիմէի կոչեցայ յաթոռ սրբոյն Գրէգորի, շինեցի զտաճար սրբոց վկայից Քրիստոսից<sup>11</sup>:»

Տաճարի հնագույն արձանագրություններից է եղել նաև 1653 թվականի վերանորոգության ժամանակ Առաքել Դավիթի ծեցու արտագրածը, որը եղել է դրված մատուի պատի վրա.

Դիմ, որով հանդիսացիս ստորնոց լինի, Սուլր Կոյս արագ աւգնական, որ և պատրսպարան եղիցիս յամենայնի յաղթող բարերար:

+ Ցիշեա և զիս՝ զոր նովիրեցայց իսկապէս ըստ անուանս վերստին աստուծագործողին կամաճաճոյ յարկիս, զոհն մասնատիպս՝ որոյ շնորհաւքն բաւականացայց, աղաչեմ յանձն և յարանուն քեզ Հռիփսիմէ:

+ Ցակովը քահանայ սուրբ կաթողիկէ արհի եպիսկոպոսարանին:



Ա. Հռիփսիմէի տաճարը

+ Ո՞վ հրաշափառ և երջանիկ վկայ անբաժանելի ծոցածին հաւր՝ և համագոյդ Հռուցին կամողին ընդստորինս ասեմ, անոխակալ երկնաւոր փեսային հարսն, զրարեցործակ արքայն ունող, գորով գլուխ, միշտ և անընդհատ յաղագս ծանաւթ քեզ սպասաւոր Սուլր Հռուցին:

+ Ո՞վ Սրբուհի աղաչեմ յիշատակողացս անուան քոյ բարեխասառվեամբ և աննուազ աղաթիւք լեր պահապան և ան-

+ Ես Խոսրովիկ ծառայ Սուլր Հռիփսիմէի:

+ Սուլր Ռուգին

+ Ստեփաննոս<sup>12</sup>:

Թե ովքե՞ր են արձանագրության մեջ Հիշվողները, և ո՞ր թվականին է գրվել, դժվար է ասել: Հիշված Խոսրովիկը Սուլր Հռիփսիմէի եկեղեցապաններից է երևում: Ըստ Պ. Ալիշանի, այս Խոսրովիկը, հավանաբար,

11. Գարեգին վարդապետ Հռվիսեփյան— Քարտուղար հայ հնագույթյան, Վազգարշապատ, 1913 թ., էջ 6:

12. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւիթիցուոյ, Վաղարշապատ, 1884 թ., էջ 252—253:

Կոմիտասի նախորդ Սահակ Պարթևի աշակերտ Խոսրովիկ թարգմանիչն է<sup>13</sup>.

618 թվականին կառուցվելուց հետո, Հոփիսիմեկի վանքի դրությունը հետագա բոլոր շրջաններում մեզ անհայտ է, գոնե հայպատմիջները որևէ ստուգ բան չեն հիշում նրա մասին մինչև 17-րդ դարը:

17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին Հոփիսիմեկի տաճարի մինչև նրա նորոգությունը եղած անմիտիքար դրության մասին այսպես է պատմում.

«Իսկ Գայիհանեայ և Հոփիսիմեայ ամենամին անբնակ և անպարհսպ, նա և դրունք ևս ոչ գոյին եկեղեցեացն և խորանացն, և յարտաքուստ կողմանէ տանիսն բովանդակ և երեսք որմոցն քանդեալ և հիմունքն խարխալեալ և խրամատեալ, և ի ներսի կողմանէ բեմն և յատակ եկեղեցոյն քանդակնդեալ և բովանդակ եկեղեցին և խորանքն ալդրովք անասնոց լցեալ, վասն զի յաւուս ամարայնոյ և ձմերայնոյ անասոնք, որպէս եղինք և ոշխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն»<sup>14</sup>.

Այսպիսով, Հոփիսիմեկի տաճարը մոտ 12 դար մատնվել է լիակատար քայլայման ու անտերության, մինչև Փիլիպոս կաթողիկոսի կատարած լիակատար նորոգությունը:

Դավրիժեցին նկարագրում է այդ նորոգությունը:

«...Ապա գնացին ի տաճար սրբուհի կուսին Հոփիսիմեայ, և ձեռն ի գործ արկեալ սկսան և զայն ևս նորոգել Վասն զի արտաքուստ կուսէ եկեղեցոյն գլուխ կաթողիկէին, և տանիքն բովանդակ, և երեսք որմոցն և յատակք նորին. իսկ ի ներսի կողմանէ բեմն և սալարկ յատակն, և չորից խորանաց մէջն, այս ամենայն զոր լիշեցի, աւերեալ և քայլայեալ էին. վասն որոյ բազում շանիւ և յոբնակի աշխատութեամբ, գուն գործեալ մինչև զամենայն նորոգեալ կատարեցին...»<sup>15</sup>,

Փիլիպոս կաթողիկոսը արևմտյան կողմից ավելացնում է նաև մի փոքր քավիթ, ժամատան նման և Կոմիտաս կաթողիկոսի արձանագրության վրա ավելացնում է նաև իրենը.

«Թուփի ՌՃՐ (1653) Քրիստոսի ծառայ

Փիլիպոս կաթողիկոս Ամենայն Հայոց վերստին նորոգեցի զեկեղեցի սրբոց կուսացն Հոփիսիմեայ և Գայիհանեայ»<sup>16</sup>,

<sup>13. Պ. Ալշան — Այրարատ, Վենետիկ, 1890 թ., էջ 238։</sup>

<sup>14. Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Ղաղարշապատ, 1884 թ., էջ 135։</sup>

<sup>15. Նույնը, էջ 252։</sup>

<sup>16. Պ. Ալիշան — Այրարատ, Վենետիկ 1890 թ., էջ 240։</sup>

Փիլիպոս կաթողիկոսն էլ հենց թաղվոամ է տաճարի ներսում, հյուսիսային կողմը, որի գերեզմանի վրա հնտագայում ծփրեմ կաթողիկոսը մի նոր մարմարյա տապանագիւմ է դնում հետեւալ արձանագրությամբ.

«Հազար հարիւր շորս թուին, մարտի քաման և հնգին վախճանեցաւ Հաղբակեցի Փիլիպոս սպանչելագործ կաթողիկոս Ամենայն Հայոց և եղաւ սուրբ նշխարք նորսա յայսմ շիրմի. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»<sup>17</sup>:

Փիլիպոս Հաղբակեցուց հետո նորոգություններ է կատարել և միաբանություն է հաստատել եղիազար կաթողիկոսը:

Իսկ 1790 թվականին Հազար Զահկեցի կաթողիկոսը հնդկարնակ հարուստ Զնթլումյան Խաչկի ծախքով կառուցում է գավթի վրա մի զանգակատուն.

«Զննդակատունս այս յիշատակ իւր կանգնեալ

Ազնիւ աղա Խաչիկ իշխանն պերճացեալ, Որ էր տոհմիւ քաջ Զնթլումեան գովեցեալ,

Որդի պարոն Առաքելի յատկացեալ, Նոր Զուղայու ի Հնդիկս գնացեալ,

ի Կալկաթա մեծ քաղաքի բնակեալ, Ուզ և գործովք պարծանք ազգի երևեալ,

ի բազում ազգս անուամբ հոչակեալ, Ցանդիացուց թագաւորէն օժտեցեալ,

Ուկեայ մանեալ և պատկերաւ պակեալ, Խսկ զկնի վախճան բարի ընկալեալ,

Խայ ընդ շայի դատն ի վերայ յաւելեալ, Այսինքն է թիւ Փրկչին ՌԶՂ (1790)»<sup>18</sup>,

Վանքի պարիսպը բուրգերով և կամարակապ դռնով (Հյուսիսային կողմից) կառուցել է Մկրտիչ Կապիսկոպոսը 1776 թվականին, ինչպես վկայում է արձանագրությունը.

«Ընորհիւ Տեառն Աստուծոյ արտաքին պարիսպ սրբոյ վանիցս Հանդիքը բրգովքս և կամարակապ դրամբս, արեկամբք Տեառն Սիմէռնի սրբազն կաթողիկոսի սպասաւոր Մկրտիչ Կապիսկոպոսին ի յիշատակ իւր և կրկնակի ծնողաց իւղոց հոգեւորաց և մարմնաւորաց. ի ՌՄԻԵ (1776 թ.), ի յունիսի ելն»<sup>19</sup>,

Այնուհետև նորանոր վանահայրեր տարբեր ժամանակներում կատարել են զամազան մանր նորոգություններ: Վերջին անգամ մասնակի, բայց համարյա հնագիտական վերանորոգություն է կատարել Խորիմյան Հայոցից (1893—1907 թ. թ.):

Վանքի վերանորոգման և պահպանման գործում զայի աշխատանք է կատարել նաև Սովետական Հայաստանի ճարտարապետա-

17. Նույնը, էջ 240։

18. Նույնը, էջ 240—241։

19. Նույնը, էջ 241։

կան հնությունների պահպանության կոմիտեն:

Այսքան վերանորոգություններից հետո, դարերի կնիքը իր վրա կրող Հռիփսիմեի տաճարը այսօր էլ կատարելապես պահպանում է իր վեհությունը: Նրա գեղեցկության ամենահիմնական պատճառը, ինչպես անացինք, պարզությունն է և տարբեր ժամանակների ներդաշնակությունը:

Տաճարը շատ մեծ չէ, մի փոքր երկար (արևելքից արևմուտք) քառակուսի տեսքով ունի արտաքուստ:

Ներքեցից տաճարի շորս կողմը պատում են երեք քարե աստիճաններ, որոնք ավելի ամրություն են տալիս, և ապա սկսում են Տաճարի բուն պատերը: Յուրաքանչյուր պատդրից իր վրա ունի երկուական խորանածեն, սրանկում կիսաբոլորակ խորշեր, հյուսիսային և հարավային խորշերը ավելի խորը, իսկ արևելյանն ու արևմտյանը՝ ավելի երեսկում խորությամբ:

Խորանածեն այս խորշերը տաճարին տալիս են արտաքուստ ծավալային կերպարանք, միևնույն ժամանակ գեղեցիկ զարդ են հանդիսանում, որը ուշագրավ է դարձնում տաճարի տեսքը: Բ. Թորամանյանը կամածելի է համարում խորանածեն այդ խորշերի 7-րդ դարին պատկանելը, գտնելով, որ նրանք 10-րդ դարի գործ են.

«Կասկածելի կտոնեմ՝ 7-րդ դարու հայոց եկեղեցիներու վրա գտնված խորշերը՝ համարելով զանոնք 10-րդ դարուն մոտ հավելվածներ, ինչպես էջմիածնի մոտ Ս. Հռիփսիմեի վանքին խորշերը: Հռիփսիմեի վանքին հետ միևնույն դարուն մեջ կանգնըված և իրարու այնքան մոտիկ էջմիածնի կաթուղիկեն և Ս. Գայանեի վանքը խորշեր չունին. Եթե նույն ժամանակ խորշը ընդունված ոճ լիներ, անպայման պետք է որ գոնե Գայանեի վանքին վրա գտնվեր Հռիփսիմեեն քանի մը տարի հետո՝ իրեն նորոգ հիմնարկված եկեղեցի»<sup>20</sup>:

Կաթուղիկեի լայն թմրուկը ունի 16 երեսիր պատուհաններով, արսիդների հատման կետերում, իսկ արտաքուստ՝ կաթուղիկեի շորս անկյուններում թմրուկից դուրս շինված են շորս աշտարակներ, նեղիկ լուսանցքներով: Բոլորակ, ոչ այնքան երկար թմրուկը իր վրա պահում է փոփած կոնի ձև ունեցող բազմանկյուն (16 երես) գմբեթը: Այս առիթով, ուսումնասիրելով Հռիփսիմեի վանքը, պրոֆ. Ն. Մ. Տոկարսկին այն եղրակացության է եկել, որ կաթուղիկեն իր թմրուկով հանդերձ ավելի ուշ շրջանի գործ է. նախ-

նական թմրուկը, ասում է նա, ավելի նեղ է եղել և ծ երես է ունեցել, կաթուղիկեն ավելի երկարավում տեսք է ունեցել, իսկ հետագայում, նվազ հաջող պլուզորցիաների ենթարկելով, տաճարը կորցրել է մասամբ իր նախնական ներդաշնակությունը<sup>21</sup>:

Անցյալ դարի գիտականներից Արշիգովսկին նույնական կարծում է, որ այժմյան Հռիփսիմեի 16-անկյունանի կաթուղիկեն ներկայացնում է:

«... Գրիգոր Նյուտոնու նկարագրած հըռշակավոր ութանկունի եկեղեցվո ոճը, սակայն կոնածեն ծածկին համար կարծիք կհայտնեն, թե շատ հին ժամանակներեն նեան ասիական նարարապետության հատուկ ոճ է»<sup>22</sup>:

Հնագույն զարդերի գեղեցիկ նմուշներ են Հռիփսիմեի լուսամուսների վրայի կիսաբոլորակ զարդերը: Բացառիկ գեղեցկություն է ներկայացնում, օրինակ, տաճարի բարձրագիր պատուհանի քանդակագրդ սկսվածքը, զարդարված խաղողի ողկուզներով:

Տաճարը կառուցված է սև տուփ քարից, տեղ-տեղ առկա են գորշ կարմրավուն և տեղ-տեղ գեղնավուն տուփը, որոնք, աներկրա, ավելի ուշ շրջանի կարկատաններ են: Տաճարը, բացի հարավային փոքր դռնից, ունի նաև արևմուտքից մի դռու ևս: Ճարտարապետ Փ. Թորամանյանը տաճարի հյուսիսային կողմից պատուհանի տակ մնացած քարից ներկայական կողմից մի դռու ևս պիտի ունեցած լինի<sup>23</sup>: Տաճարի արևմտյան պատին կից կառուցված են հետագա դարերին պատկանող գավիթն ու զանդակատունը, որոնք այնքան էլ ուշագրավ չեն ճարտարապետական տեսակետից: Տանիքը սալարկած է և ամրացված կրաշաղանուվ:

Տաճարի նեղ կամարակապ դռնից մտնելով ներս, բացվում է մի զարմանահրաշ տեսարան՝ վիթխարի ծանրություն ունեցող հսկայական կաթուղիկեն առանց սյուների հենված է տաճարի շորս պատերին, տաճարի բազմաթիվ լուսամուսներից այնպիսի առատ, պայծառ լույս է թափանցում ներս, որպիսին շնչք տեսնի մեր մյուս տաճարներից և ոչ մեկի ներսում: Երեխային առատ լույսը տաճարում ստեղծում է պայծառ, հոգեգվարթ, ուրախ տրամադրություն: Տրամ-

21. Հ. Մ. Տոկարսկիй — Արխիտեկտուրա գրեան Արմենիա, Երևան, 1945 թ., սր. 87—88.

22. Բ. Թորամանյան — Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942 թ., էջ 63:

23. Բ. Թորամանյան — Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948 թ., էջ 76:


ցիւ՝ դարձած մեր վանքերի միստիկ մթությունը այս դեպքում կարծես, տեղի է տալիս հայ ճարտարապետի մտքի պայծառ կենսունակության առաջ: Տաճարի ներքին, ամենաաշքի ընկնող արժանիքն ու յուրահատկությունը՝ նրա արձագանքն է: ՀՀուկով արտասանած ձայնն անգամ մեծ արձագանք է տալիս, պարզ է, որ տաճարում կատարվող երգեցողությունը, տաճարի այս յուրահատկության շնորհիվ, մեծ ազդեցություն է թողել և թողնում է ունկնդիրների վրա:

Ահա ինչ մեծ գնահատական է տալիս

Տաճարը ներսում բաժանված է չորս աբսիդների (խորանների), որոնցից արևելյանը ավելի խոր է և ուղղավորված են բնակչությանը: յուրաքանչյուր խորան լուսավորվում է լախ, մեծ լուսամուտով:

Տաճարի չորս խորանների հատման կետերում կան երկար, կիսաբողորակ փորվածքներ, որոնց ստորին մասերում բացվում են, մեկական ցածր փոքրիկ դռներ, որոնք տանում են առանձին քառակուսի սենյակներ:

Այս սենյակներից երկուակ (արևելյանները) եկեղեցու պետքերի համար են, դրանցից



Կոմիտաս կարողիկոսի բողած արձանա

տաճարի այդ յուրահատկությանը ճարտարապետ Թ. Թորամանյանը.

«Ելատեղ, կառուցող հմուտ ճարտարապետի գիտական ակնքախ այնպիսի մի արժանիքն է գրավում ականատեսին, որ մեր այսօրվա թատրոնական ճարտարապետների նախանձը կշարժե իր երկարածե և բարձրածայն արձագանքներով»<sup>24</sup>:

24. Թ. Թորամանյան՝ Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, երկրորդ ժողովածու, Երևան, 1948 թ., էջ 74:

Հարավ-արևելյանը ավանդատում է, իսկ հյուախ-արևելյանը բավականին խորը ունի մի փոքրիկ նեղ ու ցածր դռւու, որ տանում է դեպի աջակողմյան մասի ներքնահարկը, ուր ամփոփված են Հոփիկսիմե կուսի նշխարքները: Արևմտյան կողմի երկու սենյակները թի ինչ դեր ունեն տաճարի կառուցման մեջ, որևէ բան չի կարելի ասել: Հյուախ-արևելյան սենյակի առաստաղի մասում կա մի անցք, որը նեղ ու դժվարին ճանապարհով տանում է դեպի կտորը (գուցե հետագա նորոգության ժամանակ է բացված): Արևմտ-

յան կողմի երկու քառակուսի սենյակները, հավանաբար, ավելացվել են տաճարի սիդետրիկովիումը պահպանելու համար։ Ներսից գմբեթի թմբովը իր ունեցած հիմքից ավելի լայն է, որի հետեւանքով առաջացել է մի բոլորչի լայն տարածություն, որը և շըրջապատվել է (հավանաբար վերջին ժամանակները) տախտակյա շրջափակով։ Ամբողջ տաճարի ներսի պատերը ծեփված են ներկված մարմար ձևացնող սպիտակ յուղաներկով, որը, իհարկե, հետագա դարերի գործէ Պատարագի սեղանը ծածկված է չորս

Այսօր էլ Հոփիսիմեկ ուսումնասիրությունը աննման նյութ է սովետական մեր ճարտարապետների և արվեստագետների համար։ Եվ մի մի՞թե հետաքրքրության նյութ չէ մի այնպիսի շինություն, որը 1.300 տարուց ավելի կանգուն է, դիմանալով երկրաշարժներին և բնության ու ժամանակի հազար ու մի արհավիրքներին։

Մի քանի խոսք Հոփիսիմե կույսի նշխարքների մասին։

Կույսի նշխարքների մասին մենք երկար ժամանակ տեղեկություն չունենք, կապված



գրությունը Հոփիսիմեի տաճարի ներսում

փոքրիկ սյուների վրա ամրացված փոքրիկ գմբեթով, պաճուճված արհեստականորեն պատրաստված խաղողի որթերով (բուլորն էլ հետագա դարերի ավելացումներ)։

Անվանի ճանապարհորդներ և գիտնական անձինք, այցելելով Ս. Հոփիսիմե, իրենց օրագիրներն ու աշխատությունները լցուել են հրաշալի նկարագրություններով ու գովեստներով տաճարի մասին, զարմացմամբ համակվել տեսնելով նրա աննման ներդաշնակությունն ու մոնումենտալ ճարտարապետությունը։

Նրանց տեղափոխման կամ որևէ այլ իրողության հետ մինչև 17-րդ դարը։

17-րդ դարի ականատես պատմիչ Առաքել Փավրիժեցին վկայում է, որ Մելքիսեդ կաթողիկոսի ժամանակ լատին կրոնավորները, հեռացած միաբանությունից, մարդուսության և միարարական (ունիթուության) նպատակներով սկսել էին շրջել Արարատյան նահանգի վանքերը և, օգտվելով երկրի խառնակ դրությունից ու Մայր Աթոռի անմիտիթար վիճակից, գողանում էին հայոց վանքերից գանազան սրբոց նշխարքներ, իրենց մար-

դրսությունը գվուրացնելու համար: Ել ահա դրանցից երկուսը նպատակ են դնում գողանալ Հռիփսիմեի մասումքները: Նրանք ծածով մտնում են տաճար, քանդում մատուռի գերեզմանը.

«Եւ փորեալ զգերեզման կուսին Հռիփսիմեայ այնքան, մինչ հասեալ են ի տապան, յորոյ միջի կայր եղեալ սուրբ նըշխարքն Հռիփսիմեան... Եւ ապա զտապան լի նշխարօքն ի մատուռէն արտաքս բերեալ են ի մէջ մեծ եկեղեցտյն՝ և կամեցեալ են առնուկ զնշխարսն»<sup>25</sup>:

Սակայն վրա են հասնում էջմիածնից երկու ՚եպիսկոպոսներ, խլում նրանց ձեռքից նշխարքները, որոնց մեծ մասը կաթողիկոսի հրամանով նորից հաստատում իրենց տեղում:

Ահա թե մինչև ուր է հասել պապական եղվիտների ձեռքը. հայոց սրբություններն անդամ հանգիստ շունեին նրանց ձեռքից:

Հռիփսիմեի շրջակայքում թաղված նրա նախկին վանահայրերի մասին են պատմում սրտառուշ տապանաքարերը: Այստեղ է թաղված նաև հայտնի աստվածաբան Ստեփանոս Լեհացի (Բլվովցի) վարդապետը:

Զանգակատան տակ թաղված են եղել Կարապետ և Աստվածատուր կաթողիկոսները, որոնց տապանաքարերը չկան:

Վիճելի հարց է, թե ո՞րտեղ է թաղված Կոմիտաս կաթողիկոսը: Ավանդաբար նրա

25. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւիթեցւոյ, Վաղարշապատ, 1884 թ., էջ 136—137:

գերեզմանն են համարում տաճարի մեջտեղում, բեմի առաջ մնացած երկարավուն միքար, հատակին հալվասար: Ալիշանը հավատում է այդ ավանդությանը<sup>26</sup>, սակայն Թորամանյանը լուրջ կշռադատումներով գտնում է, որ այդպիսի մի ՚ենթադրություն զուրկ է հավանականությունից, քանի որ «Կոմիտասի ժամանակ եկեղեցական օրենքով տաճարի մեջ մեռել թաղելը մեծ սրբապղծություն էր»<sup>27</sup>:

Նա այդ քարի տեղը, նախկինում, ստորերկրյա խուզը տանող դռան տեղ է ենթադրում, որը հետագայում լցվել է հողով: Թորամանյանի կարծիքը զորիկ չէ ամենայն հավանականությունից: Եվ ինչո՞ւ վիճել, միթե՝ մեծ հայրապետի անունը անմահ չէ. Նա մի այնպիսի հրաշագեղ կոթող է կանգնել, որ իր անունն էլ, գերեզմանն էլ, ձուկել միացել են տաճարին, դարձել մի անմեռ գաղափար:

Զարմանում ես, ո՞րքան լավատես է եղել մեր ժողովուրդը, ո՞րքան արհավիրք ու աղետ է տեսել նա, բայց մի փոքր խաղաղիկ շրջան, մի փոքր ժամանակամիջոց կոփիների խառնիճաղանճ թոհուրուհի մեջ և ահա հրաշալիքներ է կերտել, Հռիփսիմյանց տաճարներ ու Զվարթնոցներ կանգնել:

26. Ղ. Ալիշան — Այրարատ, Վենետիկ, 1890 թ., էջ 239:

27. Թ. Թորամանյան — Նյութեր հայկական ձարտարապետության պատմության, Երեան, 1942 թ., էջ 293:

